

Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև 4 ժամ:

ԴԱՍ 6

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ ԶԿԱՊԿԱԾ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՊԱՏԻԺՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՊՐՈԲԱՑԻԱ ԵՎ ՄԵԴԻԱՑԻԱ

Ցուցումներ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռուսուցման բաժնում և հեռուսուցման փաթեթի կրիչում)



Մինչև 5 րոպե

Ազատությունից զրկելու հետ չկապված քրեաիրավական (քրեադատավարական) արձագանքման միջոցների կիրառման հարցերը մանրամասն կարգավորում են ստացել Տոկիոյի կանոններով [1]: Այդ փաստաթղթի կետ 2.1-ը սահմանում է, որ նման միջոցների կիրառումը ենթադրվում է քրեական հետապնդման, դատաքնության կամ դատավճռի կատարման ենթակա բոլոր անձանց նկատմամբ՝ քրեական արդարադատության իրականացման բոլոր փուլերում: Նույն փաստաթղթի կետ 2.5-ը կարևորում է հանցանք կատարած անձանց նկատմամբ հասարակությունում պահելու տարբերակի կիրառումը՝ հնարավորինս խուսափելով

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 180 րոպե

պաշտոնական գործընթացներից կամ գործի դատական քննությունից (diversion): Ընդ որում, նման միջոցները պետք է կիրառվեն «նվազագույն միջամտության» և համաչափության սկզբունքներին համապատասխան: Նախքան պաշտոնական ընթացակարգերը կամ դատաքննությունը կամ դրանց փոխարեն կիրառված ազատությունից զրկելու հետ չկապված այն միջոցների պարագայում, որոնք իրավախախտի համար պարտականություններ են սահմանում, անհրաժեշտ է իրավախախտի համաձայնությունը: Կարևոր դրույթ է պարունակում նաև Տոկիոյի կանոնների 3.11-ը, որը սահմանում է, որ «ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները կիրառելիս իրավախախտի, ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը պետք է պահպանվի»:

«Գործող քրեական օրենսդրությունը նախատեսում է անչափահասների նկատմամբ ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող միջոցների կիրառման հնարավորություն ինչպես մինչդատական, այնպես էլ դատավճռի կայացման և կատարման փուլերում:

Վերջին փուլում տեղ գտնող այլընտրանքային միջոցների մասին տե՛ս Դաս 5- ում:

Մինչդատական փուլում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող միջոցները տարբերակվում են երկու կտրվածքով՝ այլընտրանքային խափանման միջոցներ և քրեական պատասխանատվությունից ազատման որոշումներ: «Ը քրեական դատավարության օրենսգրքի [4] հոդված 134-ը սահմանում է ազատությունից զրկելու հետ չկապված այնպիսի խափանման միջոցներ, ինչպիսիք են՝ գրավը, ստորագրությունը չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, հսկողության հանձնելը, ինչպես նաև զինձառայողների նկատմամբ կիրառման ենթակա հրամանատարության

հսկողությանը հանձնելը: Նշվածներից մեկը՝ հսկողության հանձնելը, կարող է կիրառվել միայն անչափահասների նկատմամբ, թեև նշված մյուս խափանման միջոցների կիրառումը անչափահասի նկատմամբ ևս թույլատրելի է: Առանձին կանոնակարգում ունի նաև գրավի կիրառման հնարավորությունը, քանի որ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողի նկատմամբ կալանավորում կիրառելիս դատարանը քննարկում է նաև այն գրավով փոխարինելու հնարավորությունը և փաստացի գրավը հանդես է գալիս որպես կալանք խափանման միջոցի այլընտրանք: Սակայն նման հնարավորություն ընձեռվում է միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար մեղադրվող անչափահասների նկատմամբ կալանք կիրառելիս, մինչդեռ Պեկինյան կանոնների [2] կետ 13.2-ը սահմանում է, որ կալանավորումը հնարավորինս պետք է փոխարինվի այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են՝ հետևողական հսկողությունը, դաստիարակչական ակտիվ աշխատանքը կամ դաստիարակչական հաստատությունում տեղավորելը, իր կամ այլ ընտանիքի խնամքին ու հսկողությանը հանձնելը և միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների շրջանակի համար սահմանափակում չի նախատեսում:

Մինչդատական փուլում կիրառվող այլընտրանքների երկրորդ խումբը վերաբերում է անչափահասներին քրեական պատասխանատվությունից ազատման մեխանիզմներին, այսպես կոչված, դայվերժոն (diversion) հասկացությանը: Սրա էությունն այն է, որ գործի լուծումը տրվում է մինչև գործը դատարանում քննվելը, այսինքն՝ առավել վաղ փուլում: Եվրոպական երկրներում նման միջոցների շարքին են դասվում, օրինակ, *նախազգուշացումը, նկատողությունը, մեղիացիան* և այլն: ՀՀ-ում այն դրսևորվում է՝ գործուն զղջալու,

իրադրության փոփոխության, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու, տուժողի հետ հաշտության հիմքերով, համաներման ուժով անձին պատասխանատվությունից ազատելով: Այնուհանդերձ, նման կարգավորումը ևս ունի սահմանափակում, քանի որ ներկայացված միջոցներից երեքի կիրառությունը սահմանափակվում է միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների շրջանակով: ՀՀ քրեական օրենսգրքի [3] հոդվածներ 72-ի և 74-ի մեկնաբանությունից հետևում է, որ գործուն զղջալու, ինչպես նաև իրադրության փոփոխման հիմքով քրեական պատասխանատվությունից ազատել հնարավոր է միայն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձի նկատմամբ: Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատում այլ հանցագործությունների պարագայում թույլատրվում է, եթե նման հնարավորություն, խրախուսական նորմի տեսքով, հատուկ նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերում: Տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատում թույլատրվում է միայն ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու դեպքում, ընդ որում, ընթացակարգային առումով նույնիսկ հստակ կանոնակարգված չէ անչափահասի այս գործընթացին անմիջական մասնակցության հնարավորությունը:

Այլընտրանքային միջոցների հաջորդ խումբը վերաբերում է դատավճռի կայացման փուլում կիրառվողներին: Սրանց շարքին են դասվում այլընտրանքային պատժատեսակները, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները և դատարանի կողմից կայացված որոշումները (պայմանական դատապարտում, պատժի կատարման հետաձգում), որոնք հնարավորություն են տալիս ազատագրկման ձևով նշանակված պատիժը փաստացի չկրելու:

Գործող քրեական օրենսգիրքը նախատեսել է անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա միայն երկու պատիժ-այլընտրանք. *տուգանք* և *հանրային աշխատանքներ*, ընդ որում, հանրային աշխատանքները ինքնուրույն չեն կիրառվում, այլ հանդես են գալիս բացառապես որպես ազատազրկման այլընտրանք, այսինքն՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձը, դատավճիռն ի կատար ածելու կարգադրությունը ստանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում պետք է գրավոր դիմում ներկայացնի՝ արտահայտելով հանրային աշխատանքներ կատարելու իր ցանկությունը: Հատկանշական է, որ կրկին այն կիրառվում է միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների պարագայում՝ պայմանով, որ դատավճռի կայացման պահին լրացել է դատապարտյալի 16 տարին:

Գործող քրեական օրենսգրքի ներկայիս կանոնակարգումները, անչափահասների նկատմամբ թե՛ հանրային աշխատանքների, թե՛ տուգանքի կիրառման առումով, թույլ չեն տալիս դրանց հանդես գալ որպես արդյունավետ այլընտրանքներ: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 87-ի համաձայն՝ տուգանքը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: Ինչ վերաբերում է հանրային աշխատանքներին, ապա դրա կիրառման ժամանակ օրենսդիրը անչափահասների համար որևէ առանձնահատկություն չի սահմանել (բացառությամբ 16 տարեկանից սկսած դրա կիրառման հնարավորության), ինչից էլ կարելի է հետևություն ունել, որ անչափահասի նկատմամբ կիրառվող հանրային աշխատանքների տևողությունը (270-ից

2200 ժամ) և բովանդակությունը նույնն է, ինչ և չափահասների պարագայում, ինչն արդարացված չի թվում: [Օրինակ՝ Ֆինլանդիայում դրանց տևողությունը 12-ից 200, Մեծ Բրիտանիայում 40-ից 240 ժամ է:](#)



Անչափահասների նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը ՀՀ-ում կանոնակարգվում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 91-ով, որը նախատեսում է դատարանի կողմից նման միջոցների կիրառման հնարավորություն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասների համար, եթե դատարանը գտնի, որ անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելով և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով՝ հնարավոր է ապահովել նրա ուղղումը: Անչափահասների նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները՝ նախազգուշացում, ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով, պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի կողմից սահմանված ժամկետում, ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 93-ը նախատեսում է նաև ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասին պատժից ազատելը՝ առավելագույնը 3 տարի ժամկետով հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով, եթե դատարանը գտնի, որ դրանով կարող են ապահովվել պատժի նպատակները:

Օրենսդիրը նախատեսում է անչափահասի նկատմամբ մի քանի դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորություն: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 91-ի 3-րդ մասում սահմանվում է, որ «Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ»: Սակայն, գործնականում այս դրույթի կիրառումը խնդրահարույց է, քանի որ Տոկիոյի կանոնների կետ 3.1-ը սահմանում է, որ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների սահմանումը և կիրառումը պետք է կանոնակարգված լինի օրենքով:

Պեկինյան կանոնների կետ 18.1-ը սահմանում է, որ որպես նման ներգործության այլընտրանքներ կարող են լինել՝ խնամքի, ուղղորդման որոշումները, պրոբացիան, հանրօգուտ աշխատանքները, ֆինանսական տույժերը, փոխհատուցումը, ռեստիտուցիան, միջանկյալ և այլ սոցիալական աջակցության, խմբային թերապիայի և համանման միջոցառումների մասնակցելու մասին, խնամատար ընտանիքի, համայնքի կամ կրթական այլ հատատության վերահսկողությանը հանձնելու կամ այլ վերաբերելի որոշումները: Նույն կանոնների 18.2-ում սահմանվում է, որ ոչ մի անչափահաս չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ դուրս բերվել ծնողների հսկողությունից, եթե կոնկրետ գործի հանգամանքներից չի բխում դրա անհրաժեշտությունը:

Դատավճռի կայացման փուլում ՀՀ-ում անչափահասների նկատմամբ առավել հաճախ կիրառվող այլընտրանքը պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի նշանակումն է,

որի կիրառման պայմաններն ու հիմքերը նույնն են, ինչը և չափահասների պարագայում: ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է, որ այս պատիժը պայմանականորեն չկիրառելիս պետք է սահմանվի փորձաշրջան, որի ընթացքում դատապարտյալի վրա դրվում են որոշակի պարտականություններ: Գործնականում, սակայն, նման պարտականություններ երեխայի վրա գրեթե չեն դրվում, նրա հետ վերականգնողական աշխատանք չի իրականացվում, ինչն էլ երեխայի մոտ ձևավորում է անպատժելիության զգացում, մինչդեռ նույն Պեկինյան կանոնները կարևորում են անչափահասի նկատմամբ քրեաիրավական արձագանքման այս կամ այն տեսակն ընտրելիս հասարակության պահանջներին, անվտանգությանը ուշադրություն դարձնելը: Հետևաբար, ուշադրություն պետք է դարձնել ՀՀ-ում հասանելի կրթական, վերականգնողական, կանխարգելիչ ծրագրերի առկայության պարագայում փորձաշրջանի ընթացքում երեխայի վրա որոշակի պարտականություններ դնելուն (օրինակ՝ ուսումը շարունակելը, հոգեբանական օգնություն ցույց տվող կառույցներ հաճախելը, որոշակի վայրեր այցելելու արգելքը, կրթական, մշակութային ծրագրերին ներգրավվելը և այլն):

Այս առումով, առանձին հետաքրքրություն են ներկայացնում **պրոբացիան** և **մեդիացիան**, որոնք վերականգնողական արդարադատության շրջանակներում դիտարկվում են որպես արդյունավետ այլընտրանքներ: Այս 2 ինստիտուտների պարագայում էլ կարևորվում է հանցանք կատարած անձի կողմից իր արարքի համար պատասխանատվության ստանձնումը: **Մեդիացիայի** պարագայում անձին ազատում են պատժից՝ պայմանով, որ անկողմնակալ, չեզոք անձի՝ մեդիատորի աջակցությամբ, տուժողը և իրավախախտում գործած անձը կամովին, գաղտնիության ռեժիմում պահվող քննարկումների

Փորձե՛ք գտնել մեդիացիայի նախատիպերը հայկական մշակույթում:

արդյունքում հասնում են տեղ գտած խնդրի՝ երկու կողմերի համար ընդունելի լուծման: Նման պրակտիկա ներկայումս լայնորեն կիրառվում է բազմաթիվ եվրոպական երկրներում՝ Գերմանիա, Շվեյցարիա, Իսպանիա, Հոլանդիա, Ֆրանսիա և այլն: ՀՀ-ում մեդիացիան իր բուն իմաստով քրեական գործերով դեռևս առկա չէ: Առանձին տարրեր առկա են միայն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 73-ի կիրառման ընթացքում՝ տուժողի հետ հաշտության հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելիս:

Ինչ վերաբերում է **պրոբացիային**, ապա այն սոցիալ-հոգեբանական ծառայությունների համակարգ է՝ ուղղված հանցանք կատարած անձի վերահնտեգրմանը, վերասոցիալականացմանը, նրա կողմից նոր հանցանքների կանխմանը, ինչպես նաև հանրային անվտանգության ապահովմանը: Այն իրականացվում է հանցանք կատարած անձի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների կիրառման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի կրումից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու ընթացքում հսկողություն, ուղղորդում և աջակցություն իրականացնելու միջոցով: ՀՀ-ում նման ծառայությունը նոր է ձևավորվում և այս ոլորտում դեռևս փորձ առկա չէ:

Ուշադրություն դարձրեք պրոբացիայի սոցիալական, հոգեբանական և տնտեսական առավելությունների վրա:

Այս դասի շրջանակներում ներկայացրնք

- անչափահասների նկատմամբ ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող քրեաիրավական (քրեադատավարական) արձագանքման միջոցների,
- պատժատեսակների,
- դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների,



Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:



Մինչև 25 րոպե

«Նվազագույն միջամտության» սկզբունք – Անչափահասի կողմից կատարված իրավախախտմանը արձագանքելու սկզբունքը, որը ենթադրում է, որ միջամտությունը պետք է իրականացվի միմիայն անհրաժեշտության դեպքում և հնարավորինս կարճ ժամանակահատվածով:

«Համաչափության սկզբունք» – Անչափահասի կողմից կատարված իրավախախտմանն արձագանքելու սկզբունք, որը ենթադրում է կատարվածին՝ իրավախախտման ծանրությանը, բնույթին, հանցանք կատարած անձի առանձնահատկություններին (առողջական, սոցիալական վիճակին, մտավոր զարգացման, հասունության աստիճանին, ընտանեկան հանգամանքներին, կյանքի պայմաններին և այլն), հանցագործությունից հետո դրսևորած վարքագծին (օրինակ՝ պատճառված վնասը հարթելը կամ հատուցելը) համաչափ արձագանքի երաշխավորում:

Մեղիացիա – Դատաքննությանը կամ քրեական վարույթին այլընտրանք հանդիսացող գործընթաց, որի ընթացքում անկողմնակալ, չեզոք անձի աջակցությամբ տուժողը և իրավախախտում գործած անձը կամովին, քննարկումների արդյունքում հասնում են տեղ գտած խնդրի՝ երկու կողմերի համար ընդունելի լուծման:

Պրոբացիա – Սոցիալ-հոգեբանական ծառայությունների համակարգ՝ ուղղված հանցանք կատարած անձի վերաինտեգրմանը, վերասոցիալականացմանը, նրա կողմից նոր հանցանքների կանխմանը, ինչպես նաև հանրային անվտանգության ապա-

հովմանը: Այն իրականացվում է հանցանք կատարած անձի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների կիրառման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի կրումից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու ընթացքում հսկողություն, ուղղորդում և աջակցություն իրականացնելու միջոցով:

Ուղղորդման որոշում – Միջամտության տեսակ, որով հանցանք կատարած անձին ուղղորդում են այն կառույցներ կամ անձանց մոտ, ովքեր կարող են իրենց գործողություններով կամ մատուցված ծառայություններով օգնել նրան, հոգ տանել նրա մասին, աջակցել հասարակությունում նրա վերաինտեգրմանը, վերասոցիալականացմանը:

Ռեստիտուցիա – Պետական ծրագրեր, որոնց շրջանակներում մեղադրյալը պարտավորվում է, որպես իր հանդեպ կիրառվող քրեաիրավական արձագանքման միջոցի իրականացման պայման, տուժողին կամ հասարակությանը ծառայություններ մատուցել կամ գումար վճարել:

Խմբային թերապիա – Հոգեբանական աջակցության ծրագիր, որի պայմաններից մեկն այն է, որ նման աջակցությունը տրամադրվում է ոչ թե մեկ անձի առանձնացված ձևով, այլ 6-ից 12 հոգուց բաղկացած խմբի շրջանակներում: Սրա առավելությունն այն է, որ ընդհանուր խնդիրներ ունեցող խմբի անդամները կարողանում են նման աջակցություն ստանալ ոչ միայն հոգեբանից, այլ նաև միմյանցից:

Խնամատար ընտանիք – Առանց պատշաճ ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի ու դաստիարակության ապահովումը ոչ թե ծննդյան պատկանելությամբ իր, այլ մեկ ուրիշի ընտանիքում: Դաստիարակության համար խնամատար ընտանիք հանձնվող երեխան համարվում է հոգեզավակ, իսկ խնամատար ծնողներից և հոգեզավակներից կազմված ընտանիքը՝ խնամատար ընտանիք:

Վերականգնողական ծրագիր – Պետական կամ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրեր (օրինակ՝ կրթական ծրագրեր, հոգեբանական աջակցության ծրագրեր)՝ ուղղված իրավախախտում կատարած անձի վերասոցիալականացմանը, վերաինտեգրմանը, դրական ներանձնային փոփոխությունների խթանմանը, ինչն էլ կնվազեցնի հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

Այլընտրանքային միջոցներ – Ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակներ (օրինակ՝ տուգանք, հանրային աշխատանքներ) կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցներ (օրինակ՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ) կամ արձագանքման այլ միջոցներ (օրինակ՝ մեդիացիա կիրառելը, պատիժը պայմանականորեն չկիրառելը և փորձաշրջան սահմանելը):

Վերականգնողական արդարադատություն – Արդարադատության հայեցակարգ, որը շեշտադրում է կատարում ոչ թե հանցանք կատարած անձին պետության կողմից քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժելու, այլ առավելապես հանցանք կատարած անձի և

տուժողի (նրա օրինական ներկայացուցիչների, ծնողների) երկխոսության արդյունքում գործի հանգուցալուծում գտնելու, կատարված հանցավոր արարքով պատճառված վնասը, խախտված իրավունքները վերականգնելու, կատարված արարքի արդյունքում հնարավոր հետագա բացասական հետևանքները կանխելու, հանցանք կատարած անձի վերասոցիալականացման և նրա հետագա հանցավոր վարքագիծը կանխելու վրա:

Մեղիատոր – Հատուկ որակավորում ստացած անձ, ով իրականացնում է մեղիացիան՝ չեզոքություն պահպանելով օգնում հանցանք կատարած անձին և տուժողին հանգել գործի երկկողմանի ընդունելի լուծման: